

ՈՒՂԵՑ ՈՒՅՑ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Հարգելի՛ Հաճախորդ,

Մույն ուղեցույցի նպատակն է օգնել Ձեզ և ներկայացնել, թե ինչ գործողություններ է անհրաժեշտ իրականացնել, եթե Ֆինանսական համակարգի հաշտարարը կայացրել է որոշում, որը ֆինանսական կազմակերպությունը սահմանված ժամկետում չի կատարել:

Իմացե՛ք՝

Եթե Հաշտարարը կայացրել է որոշում, Դուք համաձայնել եք այդ որոշմանը, սակայն ֆինանսական կազմակերպությունը Հաշտարարի որոշմամբ սահմանված ժամկետում չի կատարել այն, ԱՊԱ՝



ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԱՆ

Դիմում ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանվում են՝

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով (հոդված 15),

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (գլուխ 51՝ հոդվածներ 341-345),

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով (հոդվածներ 2, 17, 23)

Դատարան դիմում ներկայացնելիս կարող եք առաջնորդվել այս ուղեցույցով:

Այսպես,



Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը (այսուհետ՝ Դիմում) պետք է ներկայացնեք **Ձեր (Հաճախորդի) բնակության վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:**

Ըստ այդմ, դիմումում նշվում է Ձեր բնակության վայրի դատարանի անվանումը (օրինակ՝ եթե բնակվում եք Երևանում, դիմումում պետք է նշվեն **«Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին»** բառերը: Մարզերի դեպքում նշվում է համապատասխան մարզի ընդհանուր իրավասության դատարանի անվանումը):

2

Դիմումում նշեք Ձեր (Հաճախորդի) **անունը, ազգանունը և հայրանունը, անձր հաստատող փաստաթղթի տվյալները** (անձնագիր կամ նույնականացման քարտ), ինչպես նաև այն **հասցեն**, որտեղ բնակվում եք:

Հասցեն լրացնելիս եղե՛ք ուշադիր, քանի որ դատարանից ստացվող բոլոր ծանուցումներն ու որոշումները ուղարկվելու են Ձեր նշած հասցեով: Ուստի, եթե այն սխալ նշեք, չեք ստանա համապատասխան գրությունները:

Ըստ ցանկության, կարող եք նշել նաև Ձեր հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

3

Դիմումում պետք է նշվի նաև այն **Ֆինանսական կազմակերպության լրիվ անվանումը**, որի դեմ ներկայացված բողոքը Հաշտարարը քննել է (օրինակ՝ տվյալ բանկի կամ ապահովագրական ընկերության անվանումը) և **հասցեն**:

4

Դիմումում նշե՛ք նաև Ձեր պահանջը քննած և որոշում կայացրած **Ֆինանսական համակարգի հաշտարարի անունը և ազգանունը**, ինչպես նաև **հասցեն**, այն է՝ «ք. Երևան, Մ. Խորենացու 15, «Էլիտ պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ»:

5

Անհրաժեշտ է շարադրել գործին վերաբերող **փաստական հանգամանքները՝** լրացնելով դիմումի օրինակում առկա **բոլոր տվյալները**: Նշե՛ք նաև Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջը:

Եղե՛ք ուշադիր, քանի որ որևէ տվյալ չլրացնելու կամ սխալ լրացնելու դեպքում կարող են առաջանալ բացասական հետևանքներ:

6

Անհրաժեշտ է նաև դիմումին **կցել որոշակի փաստաթղթեր**, որոնց ամբողջական ցանկը նշված է դիմումի օրինակում:

- ✓ Կից ներկայացվող փաստաթղթերից է նաև **պետական տուրքը** վճարած լինելու փաստը հաստատող փաստաթուղթը (**անդորրագիր**):
- ✓ Պետական տուրքի չափը **4,000 (չորս հազար) ՀՀ դրամ** է՝ համաձայն «[Պետական տուրքի մասին](#)» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի:
- ✓ Պետական տուրքն անհրաժեշտ է վճարել Դատական դեպարտամենտի հետևյալ հաշվեհամարին՝ **900005016010**: Այն կարող եք վճարել բանկային փոխանցմամբ կամ **պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով** (<https://e-payments.am/hy/>), որը հասանելի է [այստեղ](#):

7

Դիմումի օրինակը փոստայի ծառայության միջոցով **ուղարկե՛ք** նաև համապատասխան ֆինանսական կազմակերպությանը և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ կամ **հանձնե՛ք առձեռն**:

Դատարան ներկայացվող դիմումին կցե՛ք դիմումի մեկ օրինակը ֆինանսական կազմակերպությանը և մեկ օրինակը Հաշտարարի գրասենյակ ուղարկած լինելու փաստը հաստատող՝ փոստային օպերատորի կողմից տրված անդորրագրերը կամ դիմումի մեկական օրինակ նրանց առձեռն հանձնած լինելու մասին ապացույց, որպեսզի դատարանը կարողանա պարզել, որ իսկապես կատարել էք դիմումի օրինակը նրանց ուղարկելու՝ Ձեր պարտականությունը:

8

Դատարան ներկայացվող դիմումի հետ միասին դատարան ներկայացրեք նաև ֆինանսական համակարգի հաշտարարի **որոշումը**:

Եղե՛ք ուշադիր: Պետք է կցել որոշման բնօրինակը, ոչ թե պատճենը:

9

Դիմումին կցե՛ք նաև Ձեր **անձը հաստատող փաստաթղթի պատճենը**: Դիմումին կից ներկայացվող մյուս փաստաթղթերի մասին տե՛ս դիմումի օրինակում:

10

Վերջում նշե՛ք Ձեր անունը և ազգանունը, **ստորագրեք** դիմումը և նշե՛ք նաև դիմումը ներկայացնելու **օրը, ամիսը և տարին**:

11

Դիմումը կից փաստաթղթերի հետ միասին առձեռն ներկայացրե՛ք Ձեր բնակության վայրի դատարան կամ ուղարկե՛ք փոստային ծառայության միջոցով:



Հիշե՛ք, որ համաձայն [«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»](#) ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ դիմում ներկայացնելու **Ժամկետը 1 (մեկ) տարի է՝** սկսած այն օվանից, երբ համաձայնել էք Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմանը: Այդ ժամկետը բաց թողնելու դեպքում պետք է միջնորդեք դատարանին, որպեսզի ժամկետի բացթողումը համարվի հարգելի: Այս դեպքում պետք է հիմնավորեք, թե ինչ օբյեկտիվ պատճառներով չեք կարողացել դիմումը ներկայացնել սահմանված 1 տարվա ժամկետում: Ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդությունը լուծում է միայն դատարանը:

Սույն ուղեցույցին կցվում է դիմումի օրինակը:

Անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալու համար կարող եք զանգահարել մեր գրասենյակ՝ **060 70 11 11** հեռախոսահամարով կամ գրել մեզ info@fsm.am էլեկտրոնային փոստի հասցեին: Ուրախ կլինենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

Եղե՛ք իրազեկված և պաշտպանված:



+374 60 70 11 11



info@fsm.am



[Ֆինանսական Համակարգի Հաշտարար/FinancialSystemMediator/](https://www.facebook.com/FinancialSystemMediator/)



<https://www.fsm.am/>